ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈԼԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարիի դիմումի (մուտք՝ 12.01.2026թ. թիվ 42-2026) հիման վրա փաստաբան Քրիստինե Նիկոլայի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 3333) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը.</u>**

«ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարիին **(այսուհետև՝ Դիմող)**՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ)** հայտնել է, որ 18.01.2024թ. փաստաբան Քրիստինե Պետրոսյանի **(այսուհետև՝ Փաստաբան)** հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն վերջինս պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը «Գլոբալ Աքսես ընկերության կողմից պարտավորությունները չկատարելու հարցի շրջանակներում:

Ըստ Դիմողի, ծառայությունների դիմաց Փաստաբանին վճարվել է 300.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ Փաստաբանը ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում, որը քննիչի որոշմամբ մերժվել է: Փաստաբանը քննիչի որոշման թղթային տարբերակը ստանալուց հետո հայտնել է Դիմողին, որ բողոքարկման ժամկետները բաց են թողնված:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը հայց է ներկայացրել ընդդեմ «Գլոբալ Աքսես» ընկերության, սակայն դատարանի 11.03.2025թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության, քանի որ պատշաճ ծանուցված Հայցվորը և նրա ներկայացուցիչը 14.11.2024թ. և 11.03.2025թ. նշանակված դատական նիստերին չեն մասնակցել:

12 փետրվարի 2026թ.
թիվ 94-Ա/ԿԳ-26004

Դիմողը նշել է, որ դատարանի 11.03.2025թ. որոշման մասին Փաստաբանը տեղեկացրել է ավելի քան չորս ամիս ուշացումով, իսկ որոշումը տրամադրել է ավելի քանի վեց ամիս ուշացումով:

Դիմողը նշել է, որ այդ ողջ ընթացքում Փաստաբանը դրսևորել է անփույթ վարքագիծ, անպատասխանատու կեցվածք և Դիմողի բազմաթիվ դիմումները թողել է անպատասխան:

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Քրիստինե Պետրոսյանին ենթարկել պատասխանատվության:

2. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունը</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Քրիստինե Պետրոսյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև՝ Օրենք**) **39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն** ներկայացնել բացատրություն Վարդգես Գասպարիի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն և ապացույց չի ներկայացրել:

<u>3. Վերլուծությունը և եզրահանգումը.</u>

Գտնում եմ, որ Վարդգես Գասպարիի դիմումի հիման վրա փաստաբան Քրիստինե Պետրոսյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ հետևյալ պատճառաբանությամբ.

<u>3.1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.</u>

Պալատին է դիմել «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարին:

Օրենքի 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ (...)* ***անձի****, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների* ***հաղորդումը:***

Նշված նորմից հետևում է, որ ցանկացած անձ (ֆիզիկական և իրավաբանական անձ) կարող է բողոք ներկայացնել և բարձրացնել փաստաբանի վարքագծի հարց՝ բացառությամբ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Փաստաբանի վարքագծի կանոնագիրք** կամ **Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 2.1.2 ենթակետում նշված Կանոնագրքի որոշ կանոնների (առնչվում են վստահորդների հետ փոխհարաբերություններին) խախտման հարցերին:

Տվյալ դեպքում, Դիմողի բողոքն ընդունվում է՝ որպես անձի կողմից ներկայացված հաղորդում՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթ:

3.2. Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ նույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

3.2.1. Փաստաբանին վերագրվող վարքագիծը.

Դիմողն, ըստ էության, փաստաբան Քրիստինե Պետրոսյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու և իրեն հետաքրքրող հարցերին չպատասխանելու վարքագիծը:

Ըստ ներկայացված դիմումի՝ առերևույթ տեղի է ունեցել հետևյալը.

Փաստաբան Քրիստինե Պետրոսյանը 18.01.2024թ. Դիմողի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, համաձայն որի պարտավորվել է իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը «Գլոբալ Աքսես» ՍՊ ընկերության հետ իրավահարաբերությունների շրջանակներում:

Փաստաբանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել, որը մերժվել է: Քրեական վարույթ չնախաձեռնելու քննիչի որոշումը Փաստաբանը չի բողոքարկել:

Փաստաբանը թիվ ԵԴ2/2552/02/24 քաղաքացիական գործով «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության անունից հայց է ներկայացրել ընդդեմ «Գլոբալ Աքսես» ՍՊ ընկերության գումար բռնագանձելու պահանջի մասին, սակայն դատարանի 11.03.2025թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության, քանի որ պատշաճ ծանուցված Հայցվորը և նրա ներկայացուցիչը 14.11.2024թ. և 11.03.2025թ. նշանակված դատական նիստերին չեն մասնակցել:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը չի պատասխանել իր դիմումներին:

Կարգապահական վարույթի շրջանակներում վերը նշված հանգամանքները հնարավոր է պարզել, պատասխանելով մասնավորապես հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր իր վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք փաստաբան Քրիստինե Պետրոսյանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

<u>3.2.2. Դիմումում նշված փաստաբանի վարքագծին համընկնող կանոնը.</u>

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք է հանդիսանում փաստաբանի արարքի մեջ Օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի*

մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Վկայակոչած կանոնների վերլուծությունից հետևում է նաև, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Այդ կապակցությամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքները և օրինական շահերը բարեխիղճ և ժամանակին պաշտպանելուց բացի, սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք նա պետք է իրականացնի հանձնարարության կատարման ընթացքում՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Այս համատեքստում, դիմումում նկարագրված հանգամանքների, ինչպես նաև դրան կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ փաստաբան Քրիստինե Պետրոսյանի դրսևորած վարքագիծը առերևույթ պարունակում է Օրենքի և Կանոնագրքի նշված պահանջների հնարավոր խախտման հատկանիշներ, սակայն սույն որոշմամբ գնահատական չի տրվում Փաստաբանի գործողություններին, քանի որ այդ հարցը կարող է լուծել միայն Պալատի կարգապահական հանձնաժողովը:

<u>3.3. Կարգապահական վարույթի սահմանները.</u>

Դիմումով ներկայացված փաստերի և իրավունքի (վարքագծի կանոնի) համադրման արդյունքում վերը նշված փաստերը հաստատվելու դեպքում փաստաբանների վարքագիծը առերևույթ կարող է հակասել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջներին:

3.4. Անմեղության կանխավարկածը

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի կարգապահական հանձնաժողովի համապատասխան որոշմամբ:

4. Եզրափակիչ մասը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39.2-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդգես Գասպարիի դիմումի հիման վրա փաստաբան Քրիստինե Նիկոլայի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 3333) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-26004):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել «ՎԱԼ ՕԹՈՄԵՅՇՆ» ՍՊ ընկերությանը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման պատճենն ուղարկել Դիմողին և փաստաբան Քրիստինե Պետրոսյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

12 փետրվարի 2026թ.
թիվ 94-Ա/ԿԳ-26004
ք. Երևան